ԵՐԵՎԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, ֆաքս (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 01/04-20169 «03» 10 2019թ.

ՏԱՆՈՒՑՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ «ՍԱՆԻՏԵՔ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ» ՍՊԸ ԵՎ «ՍԱՆԻՏԵԿ (SANITEK s.a.r.l)»-Ի ՄԻՋԵՎ 27.03.2015Թ.-ԻՆ ԿՆՔՎԱԾ N ԵՔ-ԲՀՀԾՁԲ-15/3 ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՄԻԱԿՈՂՄԱՆԻՈՐԵՆ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախապատմությունը

Երևանի քաղաքապետարանի և «Սանիտեք ինտերնեյշնլ» ՍՊԸ (այսուհետ Ընկերություն) և Սանիտեկ (Sanitek s.a.r.l-ի, (երկուսը միասին Կատարող) միջև պետական գնումների գործընթացի շրջանակում 27.03.2015թ.-ին կնքվել է Երևան քաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման, ներառյալ ձմռան ամիսների ծառայությունների գնման N ԵՔ-ԲՀՀԾՁԲ-15/3 պայմանագիրը (այսուհետ Պայմանագիր) 12 (տասներկու) տարի ժամկետով, որով նշված ծառայությունների մատուցումը ընդգրկել է Ավան, Արաբկիր, Էրեբունի, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանները: Պայմանագրով Կատարողի իրավունքները և պարտականությունները իրականացնում է Ընկերությունը:

Սկսած 2017թ.-ից Ընկերության կողմից արձանագրվել են Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարման առաջին զանգվածային դեպքերը, որոնց մասին են վկայում տարբեր ԶԼՄ-ի հրապարակումները[1]:

2018թ.-ից Ընկերության կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարման ծավալները ահագնացել են այնպես, որ 2018թ. Երևան համայնքի ավագանու արտահերթ ընտրության քարոզարշավի բոլոր մասնակիցների առաջնային կարգախոսը եղել է Երևան քաղաքի աղբահանության խնդրի լուծման խոստումը, որոնք ներառված են եղել 2018թ. Երևան համայնքի ավագանու արտահերթ ընտրության քարոզարշավի բոլոր մասնակիցների

[1] https://www.civilnet.am/news/2017/08/15/%D4%B1%D5%B2%D5%A2%D5%AB-%D5%AF%D5%B8%D6%82%D5%BF%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%C2%AB%D5%B0%D5%AB%D5%BE%D5%A1%D5%B6%D5%A4%C2%BB-%D5%B0%D5%A5%D5%BF%D6%87%D5%A1%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8/319758, https://yelaket.am/?p=22526&l=am

«ՍԱՆԻՏԵՔ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ» "SANITEK INTERNATIONAL" 00465704

03/10/2019 ժամ 12:10

նախընտրական ծրագրերում: Աղբահանության խնդրին պարբերաբար անդրադարձել են տարբեր ԶԼՄ-ը[2]:

Պայմանագրային պարտավորությունների չկատարման համար, 2018թ. օգոստոս ամսին Ընկերության նկատմամբ առաջին անգամ կիրառվել է ֆինանսական ներգործության միջոց՝ 12.000.377 դրամի չափով: Սակայն աղբահանության մասով իրավիճակը չի բարելավվել և Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունների զանգվածային խախտումները շարունակվել են մինչև 2018թ. տարեվերջ:

Իրավիճակի ընդհանուր նկարագիրը 2019թ-ի տարեսկզբից

2019թ. տարեսկզբից իրավիճակը շարունակել է վատթարանալ:

Երևանի քաղաքապետարանի 1-05 թեժ գծով և Երևան քաղաքի ճգնաժամային կառավարման կենտրոնի 1-08 հեռախոսահամարին 01.01.2019թ.-ից մինչև 24.09.2019թ. ընկած ժամանակահատվածում Ավան, Արաբկիր, Էրեբունի, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների բնակիչներից ստացվել է թվով 2213 ահազանգ: ԶԼՄ-ը ևս պարբերաբար ուշադրության կենտրոնում են պահել աղբահանության խնդիրը[3]:

Պայմանագրային պարտավորությունների բացահայտ և ծավալային չկատարման համար 2019թ. ապրիլ ամսից սկսած Ընկերության նկատմամբ սկսել են կիրառվել պայմանագրով նախատեսված տուգանքները, պահումները, որոնց մի մասը 2019թ. հունիս ամսին Ընկերությունը վիճարկել է դատական կարգով:

Ընդ որում, 2019թ. ընթացքում պայմանագրային պարտավորությունների նման ծավալով և հաճախականությամբ խախտումների համար Երևանի քաղաքապետարանի կողմից թողարկվել է պայմանագրով նախատեսված թվով 286 Զախողման ծանուցում:

Վերը նշված փաստական հանգամանքները և մասնավորապես ձախողման ծանուցումները, ինչպես առանձին-առանձին, այնպես էլ իրենց ամբողջության մեջ բավարար հիմք են հանդիսացել Պայմանագրի միակողմանի լուծման համար, Պայմանագրի 2.1.3 կետի և Պայմանագրի Հիմնական պայմանների (Հավելված 2) 35.1 կետի (c) կետի հիմքով: Այուամենայնիվ, Երևան համայնքը, առանց Ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունների նման ծավալով խախտման առաջացման պատճառները ամբողջությամբ բացահայտելու, ինչպես նաև պայմանագրային պարտավորությունների հետագա բնականոն կատարման հավանականությունը պարզելու

---

[2] https://www.24news.am/index.php/news/17975, https://armtimes.com/hy/article/141704, https://kentron.am/am/news/132883

[3] https://blognews.am/arm/news/604346/norqi-2-rd-zangvatsum-mek-shabat-e-axbahanutyun-chi-katarvum-photo.html, https://www.shantnews.am/news/view/339683.html, https://mamul.am/am/news/141071, https://imedia.am/2019/08/07/%D6%84%D5%A1%D5%B6%D5%A1%D6%84%D5%A5%D5%BC-%D5%A6%D5%A5%D5%B5%D5%A9%D5%B8%D6%82%D5%B6-%D5%AC%D5%A5%D6%83%D5%BD%D5%B8%D6%82%D5%BD%D5%AB-6-%D6%80%D5%A4-%D6%83%D5%B8%D5%B2%D5%B8%D6%81%D5%B8%D6%82%D5%B4/

նկատառումներից ելնելով, ձեռնպահ է մնացել Պայմանագրի և Հիմնական պայմանների հիշատակված կետերի հիմքով պայմանագիրը միակողմանիորեն լուծելուց:

Առկա Փաստական հանգամանքները.

1. Աղբամանների և բազմաբնակարան շենքերի աղբատարերի մասով

Վերը նշված հանգամանքները վերլուծելու, գնահատելու և հետագա գործողությունների հիմնավորվածությունը և իրավաչափությունը ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանը 2019թ. հուլիս ամսին ձեռնարկել է նշված պայմանագրի գործողության ներքո գտնվող թվով 7 վարչական շրջաններում առկա 1100լ աղբամանների գույքագրման գործընթաց՝ դրանց փաստացի քանակը և տեխնիկական պարամետրերը, վիճակը Պայմանագրով սահմանված չափանիշներին համապատասխանությունը պարզելու նպատակով:

Նշված վարչական շրջաններում, ըստ կոնկրետ հասցեների մատնանշմամբ կատարված գույքագրման արդյունքներով պարզվել է, որ այդ վարչական շրջաններում 1100լ. աղբամանների ընդհանուր թիվը կազմել է ընդամենը 2407 հատ, որից սարքին վիճակում է միայն 1247 հատը: Բոլոր կոնտեյներները պլաստմասսե են:

Համաձայն Պայմանագրի Հավելված 3-ի Աղբահանության բազային ծառայությունների տարեկան հաստատուն գների (365 օր հաշվարկով) 1.1 կետով նախատեսվել է թվով 8000 հատ 1100 լիտրանոց **մետաղական**, անվավոր կոնտեյներների *մատակարարում և տեղադրում* Հավաքման տարածք, ինչպես նաև Կոնտեյներներից Քաղաքային աղբի հավաքում և հետագա հեռացում այն պարբերականությամբ, որը պահաջվում է ապահովելու, որպեսզի կոնտեյներների պարունակությունը չգերազանցի վերջիններիս տարողության 80%-ը, այդ թվում՝ նաև Աղբի հավաքում և հեռացում Հատուկ դեպքերում: Այդ ծառայությունը ներառում է նաև կոնտեյներների լվացումը, Կոնտեյներների և դրա առանձին մասերի, ներառյալ շառնիռների կամ անվավոր Կոնտեյներների դեպքում անիվների, ինչպես նաև կոնտեյներների կափարիչների փոխարինումը և կամ վերանորոգումը: Այսինքն, աղբահանությունը կազմակերպվում է 8000 հատ մետաղյա աղբամանով, պայմանագրային այն կանոնների ներքո (Տեխնիկական բնութագրի 3.4.2 և 3.8.2 կետեր), ըստ որոնց դրանք պետք է դատարկվեն այնպիսի հաճախականությամբ, որ դրանց պարունակությունը *ցանկացած պահի* չգերազանցի ծավալային տարողության 80%-ը:

Պայմանագրի կնքման պահից առ այսօր դրանում կատարված փոփոխությունների և լրացումների մասին Համաձայնագրերը (այդ թվում՝ 01.12.2018թ. թիվ 15-ը) անվերապահորեն և առանց որևէ փոփոխության, պահպանել են կոնտեյներների քանակի, դրանք մետաղյա լինելու չափանիշները, դրանց լվացման, անիվների, կափարիչների փոխարինման և կամ վերանորոգման, ինչպես նաև Հավելված 3-ի Աղբահանության բազային ծառայությունների տարեկան հաստատուն գների (365 օր հաշվարկով) 1.1 կետով նախատեսված մնացած բոլոր պարտավորությունները: Եվ նշված կետով նախատեսված տարեկան վճարման ենթակա գումարը, կազմելով Պայմանագրով նախատեսված բազային ծառայությունների մատուցման տարեկան ընդհանուր վճարումների 35%-ը, հանդիսանում է Պայմանագրի ընդհանուր արժեքի ամենամեծ բաղադրիչը:

Այսինքն նշված Պայմանագրի գործողության ներքո գտնվող վարչական շրջաններում փաստացի առկա աղբամանների առաջին հերթին ընդհանուր քանակը, երկրորդ հերթին՝ դրանցից 1164 հատի տեխնիկական անմխիթար վիճակը և երրորդ հերթին դրանց պլաստմասսայից

պատրաստված լինելը չեն համապատասխանում Պայմանագրի պայմաններին: Մինչդեռ աղբամանների քանակը, դրանց տեխնիկական վիճակը, այդ թվում՝ դրանց մետաղական լինելը, բացի հստակ պայմանագրային պարտավորություն լինելուց, առաջնային նախապայման են աղբահանության ընդհանուր գործընթացում և լոգիստիկ սխեմայում, առանց որոնց պատշաճ քանակի և որակի առհասարակ հնարավոր չէ կազմակերպել աղբահանություն: Մասնավորապես, եթե չկան բավարար քանակի աղբամաններ, ապա դա օբյեկտիվ իրականությունում նշանակում է որ՝

ա. աղբի առաջնային հավաքման գործընթացը փաստացի ձախողվում է, քանի որ աղբամանների սահմանված քանակը մի քանի անգամ պակաս լինելու արդյունքում, առկա աղբամանների տարողության 80%-ից ավելի լցված չլինելու պայմանագրային պայմանը շատ արագ սկսում է խախտվել,

բ. աղբը սկսում է բրգաձև կերպով արագ գեներացվել առկա՝ սակայն պայմանագրով սահմանված քանակից պակաս աղբամանների շուրջը, որն իր հերթին շղթայական կերպով ձախողում է նաև աղբի հավաքման գործընթացը աղբատար մեքենաների միջոցով, քանի որ եթե կոնտեյների դատարկումը աղբատարի մեջ կտևեր մի քանի րոպե, ապա բրգաձև թափված աղբը հավաքելու համար ներգրավվում է լրացուցիչ աշխատուժ, ծախսվում է լրացուցիչ աշխատաժամանակ՝ բահերով, այլ տեխնիկական միջոցներով կամ ձեռքերով այն հավաքելու և աղբատարը բարձելու համար:

գ. Լրացուցիչ աշխատուժ և (կամ) լրացուցիչ աշխատաժամանակ ներգրավելու, ծախսելու արդյունքում աղբատար մեքենայի անձնակազմը, *ուժասպառ լինելու հետ մեկտեղ*, հետ է ընկնում տվյալ երթուղու համար սահմանված ժամային գրաֆիկից և վերջնարդյունքում անհամեմատ ավելի քիչ աղբ է հավաքում, որն էլ իր հերթին արդեն հետադարձ շղթայական կերպով ազդում է դեռևս չհավաքված աղբամանների լցվածության վրա, որոնք արագորեն լցվում են կամ արդեն իսկ լցված են:

Գույքագրման արդյունքները Երևանի քաղաքապետի 29.07.2019թ. թիվ 01/45-14640 գրությամբ ներկայացվել են Ընկերությանը: Նշված գրությամբ Երևանի քաղաքապետարանը ի սկզբանե չի բացառել, որ իրականացված գույքագրման ընթացքում տեղի ունեցած լինեն որոշակի անճշտություններ, վրիպակներ կոնկրետ հասցեներում առկա աղբամանների քանակի կամ դրանց տեխնիկական վիճակի հետ:

Այդ նկատառումներից ելնելով՝ Ընկերությանը առաջարկվել է, եթե կան նման անճշտություններ և սխալներ, ապա անմիջապես դրանց մասին տեղեկացնել Երևանի քաղաքապետարանին, նշելով կոնկրետ հասցեն և Ձեր կոնկրետ դիտարկումը՝ միաժամանակ պատրաստակամություն հայտնելով նման դեպքերում կրկին անգամ, այդ թվում՝ Ընկերության լիազորված ներկայացուցիչների մասնակցությամբ, նրանց հարմար ժամանակ կոնկրետ վայրերում կրկին գույքագրել դրանց առկայությունը և տեխնիկական վիճակը:

Միաժամանակ վերը նշված գրությամբ պահանջվել է նաև ներկայացնել պարզաբանումներ գույքագրման արդյունքներով պայմանավորված հետևյալ հարցերի վերաբերյալ, նկատի ունենալով

Երևան քաղաքում աղբահանության խիստ անբավարար մակարդակը և չափազանց կարևորելով այն հավուր պատշաճի իրականացնելու պայմանագրային պահանջները.

1. Ինչ՞ նկատառումներից ելնելով չի ապահովվել և չի ապահովվում Պայմանագրով սահմանված թվով 8000 մետաղյա աղբամանների առկայությունը վերը հիշատակված վարչական շրջաններում:

2. Երբ՞ կհամալրվի աղբամանների քանակը ըստ Պայմանագրի պայմանների, այդ թվում՝ վնասված և ջարդված աղբամանները ամբողջությամբ փոխարինելու կամ վերանորոգելու միջոցով:

3. Ինչ՞ նկատառումներից ելնելով և ինչ իրավական հիմքերի վրա են մետաղական կոնտեյներների փոխարեն մատակարարվել և տեղադրվել պլաստմասսե կոնտեյներներ:

Հարկ է նշել, որ Պայմանագրի գործողության ներքո գտնվող վարչական շրջաններում արված գույքագրման մասով Երևանի քաղաքապետարանի վերը նշված գրությանը Ընկերության կողմից ոչ մի պատասխան, առաջարկ կամ կոնկրետ դիտարկում չի արվել, այդ թվում՝ կրկնակի կամ համատեղ գույքագրման պահանջ, չնայած այդ գրությունը ստանալու օրվանից անցած ժամանակը առավել քան բավարար էր ցանկացած ծավալի և բովանդակության դիտարկում, առարկություն ներկայացնելու համար և համապատասխան պահանջի դեպքում կրկին գույքագրում իրականացնելու համար: Եվ այս առումով Երևանի քաղաքապետի գրությունը անպատասխան թողնելը խիստ մտահոգիչ է՝ հաշվի առնելով գույքագրմամբ արձանագրված աղբամանների քանակը և վիճակը:

Այդ նկատառումներից ելնելով՝ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի վերը նշված 29.07.2019թ. թիվ 01/45-14640 գրությունը, ըստ որի գույքագրմամբ արձանագրված աղբամանների և (կամ) դրանց տեխնիկական վիճակի մասին կոնկրետ հասցեներում վերանայումների պահանջ Ընկերության կողմից չներկայացվելու դեպքում Երևանի քաղաքապետարանը համարելու է, որ գույքագրման արդյունքները ընդունելի են նաև Ընկերության համար, Երևանի քաղաքապետարանը Ընկերությանը հասցեագրված Երևանի քաղաքապետի 03.09.2019թ. թիվ 01/04-17373 գրությամբ փաստագրել է, որ 29.07.2019թ. թիվ 01/45-14640 գրությամբ Պայմանագրի գործողության ներքո գտնվող վարչական շրջաններում առկա աղբամանների քանակի և դրանց տեխնիկական վիճակի վերաբերյալ Ընկերությանը ներկայացված գույքագրման արդյունքները համապատասխանում են իրականությանը[4]:

Միաժամանակ Պայմանագրով աղբամանների մասով սահմանված պայմանների պահպանման, այդ թվում՝ պակաս աղբամանները լրացնելու հնարավորության վերաբերյալ վերջնական հստակություն մտցնելու նկատառումներից ելնելով՝ Երևանի քաղաքապետի հիշատակված 03.09.2019թ. թիվ 01/04-17373 գրությամբ երկրորդ անգամ պահանջվել է

[4] Հաշվի առնելով նաև, որ Ընկերության տնօրենը իր վերջին հարցազրույցներից մեկում ըստ էության Երևանի քաղաքապետարանի գույքագրածի շրջանակներում հաստատել է դրանց ընդհանուր քանակը https://www.shantnews.am/news/view/460583.html?fbclid=IwAR29VWgnkT5AAEm-hI3d7ftIYhhdC83Xa4cxFRnxTYIDdXBBZw12y1hST8U 19:56-ից

պարզաբանում ներկայացնել 29.07.2019թ. թիվ 01/45-14640 գրությամբ ներկայացված թվով 3 հարցերի վերաբերյալ:

Երևանի քաղաքապետի վերոնշյալ գրությանը ևս Ընկերության կողմից ոչ մի պատասխան, առաջարկ կամ կոնկրետ դիտարկում չի արվել, չնայած այդ գրությունը ստանալու օրվանից անցած ժամանակը առավել քան բավարար էր ցանկացած ծավալի և բովանդակության դիտարկում, առարկություն ներկայացնելու համար:

Այսպիսով, հիմք ընդունելով 2019թ հուլիս ամսվա ընթացքում Պայմանագրի գործողության ներքո գտնվող վարչական շրջաններում առկա 1100 լիտրանոց աղբամանների գույքագրման արդյունքները, Երևանի քաղաքապետի 29.07.2019թ. թիվ 01/45-14640 և 03.09.2019թ. թիվ 01/04-17373 գրությունները, Երևանի քաղաքապետարանը արձանագրում է, որ՝

- Պայմանագրի գործողության ներքո գտնվող վարչական շրջաններում փաստացի առկա աղբամանների ընդհանուր քանակը մոտ 3.3 անգամ (8000/2407=3.3), իսկ օգտագործման համար պիտանի աղբամանների քանակը մոտ 6.4 անգամ (8000/1247=6,4) պակաս է պայմանագրի Հավելված 3-ի Աղբահանության բազային ծառայությունների տարեկան հաստատուն գների (365 օր հաշվարկով) 1.1 կետով նախատեսված թվով 8000 հատից,

- Պայմանագրի գործողության ներքո գտնվող վարչական շրջաններում փաստացի առկա աղբամանները ամբողջությամբ պլաստմասսե են, որը չի համապատասխանում պայմանագրի Հավելված 3-ի Աղբահանության բազային ծառայությունների տարեկան հաստատուն գների (365 օր հաշվարկով) 1.1 կետով աղբամանի համար նախատեսված տեխնիկական այն է՝ մետաղյա լինելու չափանիշին, որը իր հերթին անհամեմատ մեծացրել է աղբամանների կոտրվելու, այրվելու հավանականությունը,

- Ընկերությունը, անպատասխան թողնելով Երևանի քաղաքապետի թվով երկու պաշտոնական հարցումները, չի ներկայացրել որևէ դիրքորոշում Պայմանագրով պահանջվող աղբամանների՝ տեխնիկական չափանիշներին համապատասխան, քանակը լրացնելու մասին [5]:

Ամփոփելով վերը նշվածը՝ փաստագրվում է, որ Պայմանագրի գործողության ներքո գտնվող վարչական շրջաններում առաջին հերթին փաստացի առկա աղբամանների քանակը և դրանց տեխնիկական վիճակը ֆիզիկապես անհնար է դարձնում ապահովել աղբամանների տարողության առավելագույնը մինչև 80%-ը լցված լինելու պայմանագրային (Տեխնիկական բնութագրի 3.4.2 և 3.8.2 կետեր, Հավելված 3-ի (Աղբահանության բազային ծառայությունների տարեկան հաստատուն գների (365 օր հաշվարկով) 1.1 կետ) և դրանց մինչև 2/3-ը լցված լինելու ՀՀ առողջապահության նախարարի

[5] Աղբամանների (կոնտեյներների) սարքին, մաքուր, լվացված և խնամված լինելու, դրանց մեխանիկական վերանորոգման, այդ թվում նշված նպատակներով արագ փոխարինման, ինչպես նաև դրանք բնականոն կերպով մաշվելո կամ կորստի, վնասման, ոչնչացման դեպքում դրանց փոխարինման բոլոր պարտավորությունները ուղղակիորեն դրված են Ընկերության վրա՝ Պայմանագրի Տեխնիկական բնութագրի 2.1.12, 2.2.15, 3.2.5 և 3.2.6 կետերի պահանջներին համահունչ:

22.12.2009թ. թիվ 25-Ն հրամանով հաստատված «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ»-ի (այսուհետ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ) 11-րդ կետի պահանջները:

Եվ Պայմանագրով 2019թ. ընթացքում թվով 286 հատ ձախողման ծանուցումները, որոնք կուտակված աղբը համապատասխանության ծանուցումներով լրացուցիչ տրված ժամկետում չհավաքելու համար են թողարկվել, համապարփակ կերպով ապացուցում են վերը թվարկված փաստական հանգամանքների առկայությունը: Ընդ որում, վերը թվարկված ձախողման ծանուցումների մի մասը թողարկվել են բազմաբնակարան շենքերի աղբատարներում կուտակված աղբը չհեռացնելու համար, որոնք պայմանագրային պարտավորությունների ավելի կոպիտ խախտումներ են հետևյալ պատճառաբանություններով.

Պայմանագրի Տեխնիկական բնութագրի 3.6.2 կետի համաձայն, ցանկացած և յուրաքանչյուր դեպքում, երբ կենցաղային աղբը մաքրվում է նման աղբախցերից, համապատասխան միջոցառումներ պետք է նախաձեռնվեն կրծողների, միջատների և այլ վնասատուների կանխարգելման և վերահսկման նպատակով: Պետք է կիրառվեն վնասատուներին բռնելու, ոչնչացման և անվտանգ հեռացման ապահով և արդյունավետ մեթոդներ, ինչը նույնպես Ընկերության պարտականությունն է: Մինչդեռ բազմաբնակարան շենքերի աղբատարների չմաքրված վիճակը պարզապես անհնարին է դարձնում նաև կրծողների և այլ վնասատուների դեմ պայքարը և շենքերի աղբատարների ներսում կուտակված աղբի չհեռացումը, անհամեմատ ավելի վտանգավոր հետևանքներ է ստեղծում շենքի բնակիչների համար, քան փողոցում կամ բակային տարածքներում աղբի համար տեղադրված աղբամանների (կոնտեյներների) 80%-ից ավել լցված լինելը: Ընդ որում, ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ 5-րդ և 7-րդ կետերի պահանջներին համապատասխան, աղբատարների խցերում նույնպես պետք է տեղադրվեն աղբի կոնտեյներներ, աղբահանության գործընթացը արագ և հեշտ կազմակերպելու համար, մինչդեռ կատարված գույքագրման արդյունքներով ակնհայտ է, որ աղբատար խցերում դրանք նույնպես սահմանված քանակից պակաս են եղել, որի հետևանքով սույն ծանուցման ա, բ, գ կետերում բերված հիմնավորումների ներքո նույնպես անհամեմատ բարդացել է աղբահանության գործընթացը: Եվ դրա արդյունքում 2019թ հուլիս-օգոստոս ամիսների շոգ եղանակի և դրանով պայմանավորված շենքերի լուսամուտները փակելու անհնարինության պայմաններում աղբատարերի ներսում կուտակված աղբը չհեռացնելու պատճառով տարածվող գարշահոտությունը պարզապես անհնար է դարձրել նույնիսկ գիշերային ժամերին քնելը, հանգստանալը, որը մանկահասակ երեխաների, տարբեր հիվանդություններ ունեցող անձանց առկայության պարագայում պարզապես անթույլատրելի է և անհամատեղելի է ՀՀ սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ առողջության պահպանման հիմնարար իրավունքի հարգման հրամայականի հետ:

Այսինքն, Պայմանագրի գործողության ներքո գտնվող վարչական շրջաններում առաջին հերթին աղբամանների առկա քանակով, դրանց տեխնիկական վիճակով պայմանավորված՝ Ընկերության կողմից մատուցվող ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրով նախատեսված պահանջներին, մատուցման ժամկետներին, որի արդյունքում Կապալառուն

ակնհայտ էականորեն խախտում է պայմանագիրը, մասնագրերով սահմանված հիմնական կետերի պահանջները, որպիսի հանգամանքները թե առանձին-առանձին և թե միասին վերցրած հիմք են Պայմանագրի 2.1.3 կետի «ա» և «բ» ենթակետերի հիմքով պայմանագիրը լուծելու համար:

2. Աղբատար մեքենաների և այլ հատուկ տեխնիկայի մասով

Պայմանագրի գործողության ներքո գտնվող վարչական շրջաններում փաստացի առկա աղբամանների գույքագրումից հետո, Երևանի քաղաքապետարանը ձեռնամուխ է եղել պայմանագրի շրջանակներում Ընկերության կողմից շահագործվող աղբահանության, սանմաքրման, այդ թվում՝ ձմեռային պահպանման ծառայությունների մատուցման ժամանակ օգտագործվող համապատասխան տրանսպորտային միջոցների, մեքենաների, մեքենամեխանիզմների, սարքերի, սարքավորումների և նյութերի (միջոցների) համապատասխանությունը Պայմանագրով սահմանված չափանիշներին և պայմաններին պարզելուն: Այդ նպատակով 02.08.2019թ.-ին ընդունվել է Երևանի քաղաքապետի թիվ 757-Ա կարգադրությունը, իսկ Ընկերությունը իր 13.08.2019թ. թիվ HM/138219 գրությամբ ներկայացրել է համապատասխանության պարզման աշխատանքներին մասնակցող լիազորված անձին:

Կատարված աշխատանքների արդյունքում 23.09.2019թ-ին Ընկերության կողմից ինչպես շահագործվող, այնպես էլ շահագործման համար ոչ պիտանի ավտոմեքենաների և հատուկ տեխնիկայի ամեն միավորի մասով կազմվել են համապատասխան ակտեր: Ըստ այդ ակտերի, Ընկերության անվամբ հաշվառվող և նրա կողմից օգտագործվող ու շահագործման համար պիտանի՝ Տեխնիկական բնութագրի 2.1.10 կետով[6] սահմանված պահանջներին համապատասխանող աղբատարները ընդամենը 6-ն են և դա այն պարագայում, երբ Ընկերությունը իր 28.12.2018թ. թիվ AK/2818618 գրությամբ ամբողջ Երևան քաղաքի ամենօրյա կարիքների համար օգտագործվող աղբատարների քանակ նշել էր առնվազն 19 մեծ, 5 միջին և 5 փոքր աղբատարներ (ընդամենը 29 միավոր): Այլ կերպ ասած՝ շահագործման համար պիտանի աղբատար մեքենաների քանակը պայմանագրի գործողության ներքո գտնվող վարչական շրջանների նորմալ աղբահանության կազմակերպման համար, հենց նույն Ընկերության ներկայացված տվյալների համաձայն, պակաս է առնվազն երկու անգամ: Եվ դա այն պարագայում, երբ Երևանի քաղաքապետարանի գնահատականներով, վերը հիշատակված թվով 7 վարչական շրջանների աղբահանության նորմալ կազմակերպման համար անհրաժեշտ աղբատարների քանակը, ըստ տարբեր բեռնատարողության, չի կարող պակաս լինել առնվազն 20 միավորից: Եվ Երևանի քաղաքապետարանի նշված գնահատականները առաջին հերթին հիմնավորվում են նաև ուսումնասիրության ընթացքում արձանագրված՝ ներկայումս շահագործման համար ոչ պիտանի 7 աղբատար ավտոմեքենաների առկայությամբ, որոնք նախկինում շահագործվել են աղբահանության նպատակով:

---

[6] Ընկերության անվամբ հաշվառված և օգտագործվող 1980-ականներին արտադրված թվով 4 ԶԻԼ աղբատարները և թվով 5 ԶԻԼ ինքնաթափերը չեն համապատասխանում Տեխնիկական բնութագրի նշված կետով սահմանված պահանջներին, ըստ որի Ցանկացած ծառայության տեսակետից Կապալառուն չպետք է առանց լիազորված պաշտոնատար գրավոր թույլտվության, տասը տարուց ավելի վաղ արտադրված որևիցէ մեքենա շահագործի:

Ուսումնասիրության ընթացքում Աղբահանության ծառայությունների մատուցման համար Ընկերության կողմից օգտագործվող աղբամանների (կոնտեյներների) *լվացման, ներկման և շոգելվացման* համար անհրաժեշտ մեքենաներ, սարքավորումներ և մեքենամեխանիզմներ, որոնք կապահովեն Պայմանագրի Տեխնիկական բնութագրի 2.2.12 և 2.2.13 կետերով նախատեսված պարտավորությունների կատարումը, չեն հայտնաբերվել: Այդ հանգամանքը իր հերթին անհնար է դարձնում նշված կետերով նախատեսված պայմանագրային պարտավորությունների կատարումը, խիստ բացասաբար անդրադառնալով աղբամանների, աղբամանների հարթակների շուրջը տիրող սանիտարական վիճակի վրա, երբ նույնիսկ աղբամանի դատարկելուց հետո պահպանվում է աղբին բնորոշ գարշահոտությունը աղբամանների շրջակայքում:

Ուսումնասիրության ընթացքում սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման ժամանակ Ընկերության կողմից բացօթյա օգտագործման մակերեսի մաքրման համար նախատեսված փոշեկուլներ չհայտնաբերվեցին, իսկ «Ինտերնեյշնլ Լոջիսթիկս» ՍՊԸ անվամբ հաշվառված և Սանիտեկ (Sanitek s.a.r.l-ի կողմից շահագործվող թվով 7 փոշեկուլները գտնվում էին անսարք և շահագործման համար ոչ պիտանի վիճակում, ինչը ենթադրում է, որ դրանք չեն կարող օգտագործվել նաև Ընկերության կողմից:

Այս հանգամանքը Պայմանագրի գործողության ներքո գտնվող վարչական շրջաններում բացօթյա օգտագործման մակերեսի մաքրման ծառայությունների պատշաճ մատուցումը դարձնում է չափազանց խնդրահարույց:

Ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ սանիտարական մաքրման ծառայությունների վերահսկման՝ Պայմանագրի Տեխնիկական բնութագրի 2.3.6 կետով նախատեսված անհրաժեշտ սարքավորումները, այդ թվում՝ GPS սարքերը, վերահսկման կենտրոնը առկա չեն, որի արդյունքում սանմաքրման ծառայությունների մատուցման վերահսկման համակարգ ընդհանրապես գոյություն չունի: Հետևաբար հնարավոր չէ ֆիքսել արդյոք հիշյալ ծառայությունները մատուցվել են անհրաժեշտ ծավալով և որակով:

Ուսումնասիրության (գույքագրման) արդյունքները Երևանի քաղաքապետի 25.09.2019թ. թիվ 01/04-19237 գրությամբ ներկայացվել են Ընկերությանը (վերջինիս կողմից ստացվել է 26.09.2019թ.-ին), առաջարկելով անճշտությունների և սխալների դեպքում անհապաղ այդ մասին տեղեկացնել Երևանի քաղաքապետարանին: Միաժամանակ Ընկերությանը տեղեկացվել է սխալների և անճշտությունների առկայության դեպքում կրկին ուսումնասիրություն կատարելու Երևանի քաղաքապետարանի պատրաստակամության, իսկ եռօրյա ժամկետում վերանայումների փաստարկված պահանջներ չներկայացվելու դեպքում դրանք ամբողջությամբ նաև Ընկերության համար ընդունելի համարվելու մասին:

Ընկերության կողմից այդ գրությանը որևէ պատասխան չի ներկայացվել, որի հիմքով արձանագրվում է, որ կատարված ուսումնասիրության արդյունքները վերջնական են:

Այսպիսով, ամփոփելով Պայմանագրի գործողության ներքո գտնվող վարչական շրջաններում առկա աղբամանների գույքագրման, ինչպես նաև Երևանի քաղաքապետի 02.08.2019թ. թիվ 757-Ա կարգադրության հիման վրա կատարված ուսումնասիրությունների (գույքագրման) արդյունքները, փաստագրվում է որ՝

1. Պայմանագրի գործողության ներքո գտնվող վարչական շրջաններում առկա աղբամանների փաստացի քանակը, դրանց տեխնիկական վիճակը և Պայմանագրի շրջանակներում շահագործվող աղբատարներ մեքենաների քանակը՝ թե որպես աղբահանության իրականացման գործընթացի առանձին-առանձին բաղադրիչներ և թե որպես միաժամանակ միմյանցով սերտորեն պայմանավորված և միմյանց փոխլրացնող մեկ ամբողջություն անհնար են դարձնում Պայմանագրի գործողության ներքո գտնվող 7 վարչական շրջաններում աղբահանության ծառայությունների պատշաճ մատուցումը և մասնավորապես աղբամանների տարողության առավելագույնը մինչև 80%-ը լցված լինելու պայմանագրային (Տեխնիկական բնութագրի 3.4.2 և 3.8.2 կետեր, Հավելված 3-ի 1.1 կետ) և դրանց մինչև 2/3-ը լցված լինելու ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ 11-րդ կետի պահանջների պահպանումը:

2. Պայմանագրի գործողության ներքո գտնվող վարչական շրջաններում բացօթյա օգտագործման մակերեսի մաքրման համար փոշեկուլների բացակայության հանգամանքը Ընկերության կողմից բացօթյա օգտագործման մակերեսի մաքրման ծառայությունների պատշաճ մատուցումը դարձնում է չափազանց խնդրահարույց, որպիսի հանգամանքը համադրելով Տեխնիկական բնութագրի 2.3.6 կետով նախատեսված սանմաքրման ծառայությունների մատուցման վերահսկման համակարգի բացակայության հետ, անհնար է դարձնում պարզել այդպիսի ծառայությունները անհրաժեշտ ծավալով և որակով մատուցման փաստերը՝ համապատասխան ժամանակահատվածներում:

Այսինքն, Պայմանագրի գործողության ներքո գտնվող վարչական շրջաններում առաջին հերթին աղբամանների առկա քանակով, դրանց տեխնիկական վիճակով և աղբատար մեքենաների քանակով պայմանավորված՝ Ընկերության կողմից մատուցվող ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրով նախատեսված պահանջներին, մատուցման ժամկետներին, որի արդյունքում Կապալառուն ակնհայտ էականորեն խախտում է պայմանագիրը, մասնագրերով սահմանված հիմնական կետերի պահանջները, որպիսի հանգամանքները թե առանձին-առանձին և թե միասին վերցրած հիմք են Պայմանագրի 2.1.3 կետի «ա» և «բ» ենթակետերի հիմքով պայմանագիրը լուծելու համար:

3. Պայմանագրի կատարումն ապահովող պայմանագրերի մասով

Պայմանագրի գործողության ներքո գտնվող վարչական շրջաններում առկա աղբամանների գույքագրման, ինչպես նաև Երևանի քաղաքապետի 02.08.2019թ. թիվ 757-Ա կարգադրության հիման վրա կատարվող աշխատանքներին զուգահեռ, Երևանի քաղաքապետարանը ձեռնամուխ է եղել Ընկերության կողմից Պայմանագրի պատշաճ կատարումն ապահովող անհրաժեշտ պայմանագրերի առկայության, ինչպես նաև դրանց գործողության մեջ լինելու փաստերի ստուգմանը:

Մասնավորապես, Պայմանագրի Հիմնական պայմանների 21.1 կետի համաձայն, Մեկնարկի օրվանից Կապալառուն պետք է ապահովի ապահովագրության հետևյալ նվազագույն միջոցառումները հեղինակավոր ապահովագրական ընկերության հետ, որը նախապես ընդունվել է Լիազորված պաշտոնատար անձի կողմից.

(a) Գործատուի պարտավորություն – Պայմանագրի տարեկան գնի 10 % չափով[7],

(b) Պարտավորություն, սպառողների կրած վնասի համար – ՀՀ 100 մլն դրամ (մեկ տարում պատահող) և

(c) Մեքենայի, սարքի կամ Սարքավորման ապահովագրություն՝ համապատասխանելու համար օրենսդրական պահանջներին և ցանկացած այլ ապահովագրություն, որը համահունչ է Կապալառուի կողմից նախաձեռնված Ծառայությունների բարեխղճորեն իրականացման պրակտիկային:

Պայմանագրով նախատեսված սույն պարտավորությունների կատարումը Ընկերության կողմից պարզելու նպատակով Երևանի քաղաքապետի 02.08.2019թ. թիվ 01/04-14926 գրությամբ առաջարկվել է ներկայացնել վերը նշված ապահովագրական պայմանագրերի և պոլիսների պատճենները, իսկ եթե դրանք չկան կամ չեն կնքվել, ապա համապատասխան պարզաբանումներ նաև այն մասին, թե ինչ իրավական հիմնավորմամբ դրանք չեն կնքվել կամ չկան:

Երևանի քաղաքապետի վերը նշված գրությամբ ներկայացված պահանջին ի պատասխան՝ Ընկերության 13.08.2019թ. թիվ AM/13821911 գրությամբ Երևանի քաղաքապետարան են ներկայացվել բացահայտ անարժանահավատ տվյալներ: Մասնավորապես այդ գրությամբ ներկայացվել է պահանջվող հարցման և Հիմնական պայմանների 21.1 կետով նախատեսված ապահովագրության տեսակների հետ ընդհանրապես, նույնիսկ տրամաբանական կապ չունեցող Ընկերության վարձակալած տարածքի ապահովագրության թվով 2 պայմանագիր (մեկի գործողության ժամկետը լրացած է եղել), թվով 2 ապահովագրական պոլիսներ Ընկերության կողմից շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների (ապահովադիր՝ Ընկերություն) մասով, որոնք նույնիսկ ստորագրված չեն եղել ապահովադրի կողմից, մեկ ավտոտրանսպորտային միջոցների (ապահովադիր՝ Ընկերություն) ապահովագրության և ևս երկու պայմանագիր Ընկերության աշխատակիցների առողջության և դժբախտ պատահարներից ապահովագրության մասով, որոնց բոլորի գործողության ժամկետը լրացած է եղել:

Նման գործելաոճը Երևանի քաղաքապետի 23.08.2019թ. թիվ 04/16506 գրությամբ դիտարկվել է որպես Երևանի քաղաքապետարանին մոլորության մեջ գցելու ակնհայտ փորձ և նույն գրությամբ ևս մեկ անգամ պահանջվել է ներկայացնել Պայմանագրի Հիմնական պայմանների 21.1 կետի հիմքով պարտադիր համարվող ապահովագրության նվազագույն տեսակները և փաստաթղթային փաստարկ առ այն, որ նման ապահովագրությունները պատշաճ ապահովվում են, համաձայն Հիմնական պայմանների 21.2 կետի, հակառակ դեպքում համարվելու է, որ նման ապահովագրությունները բացակայում են, դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով:

Սակայն Երևանի քաղաքապետի 23.08.2019թ. թիվ 04/16506 գրությանը Ընկերության կողմից առ այսօր որևէ պատասխան չի ներկայացվել, ինչպես նաև չեն ներկայացվել Պայմանագրի Հիմնական պայմանների 21.1 կետով սահմանված և պարտադիր համարվող ապահովագրության տեսակները և փաստաթղթային փաստարկ առ այն, որ դրանք պատշաճ կերպով ապահովվում են:

---

[7] Վերջին օրերին Երևանի քաղաքապետարանի առջև Ընկերության նախկին աշխատակիցների բողոքի ակցիաները, որոնք պայմանավորված էին կատարած աշխատանքի դիմաց չվարձատրվելու հանգամանքով, պարզորոշ կերպով հաստատում են այդպիսի ապահովագրության առկայության կարևորությունը

Այսպիսով, ամփոփելով Պայմանագրի Հիմնական պայմանների 21.1 կետով նախատեսված ապահովագրության տեսակների առկայության և գործողության մեջ լինելու ստուգման գործընթացը, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 02.08.2019թ. թիվ 01/04-14926 գրությամբ ներկայացված հարցումը, դրա վերաբերյալ Ընկերության 13.08.2019թ. թիվ AM/13821911 գրությամբ ներկայացված ապահովագրության պայմանագրերը, ապահովագրության վկայագրերը, ինչպես նաև Երևանի քաղաքապետի 23.08.2019թ. թիվ 04/16506 գրությամբ ներկայացված կրկնակի պահանջը պայմանագրերի ներկայացման վերաբերյալ, արձանագրվում է, որ Ընկերության մոտ իսպառ բացակայում են Պայմանագրի Հիմնական պայմանների 21.1 կետով նախատեսված ապահովագրության տեսակները:

Եվ այդ պայմանագրերի, վկայագրերի բացակայությունը, Պայմանագրի Հիմնական պայմանների 35.1 կետի (l) ենթակետի հիմքով, Պայմանագիրը գրավոր Ծանուցմամբ միակողմանի լուծելու *հնարավոր* հիմք է:

Պայմանագրի 4.1.3 կետի 2-րդ պարբերության համաձայն, «եթե պայմանագիրը կնքվելու կամ դրան հաջորդող տարվա ընթացքում նախատեսվում են ֆինանսական միջոցներ պայմանագրի կատարման համար, ապա ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագրի կնքման պայման է հանդիսանում պայմանագիր կնքած անձի կողմից՝ համաձայնագրի նախագծով նախատեսված բազային ծառայությունների տարեկան հաստատուն գների հանրագումարի տաստոկոսի չափով վարկային գծի տրամադրման մասին բանկի կամ վարկային կազմակերպության հետ կնքված պայմանագրի կամ բանկի, վարկային կազմակերպության կամ ապահովագրական ընկերության կողմից տրված երաշխիքի ներկայացումը: Ընդ որում՝ վարկային գծի կամ երաշխիքի գործողության ժամկետը չպետք է պակաս լինի համաձայնագրի ողջ ծավալով կատարման վերջնաժամկետից»

Երևանի քաղաքապետի 12.08.2019թ. թիվ 01/61-15607 գրությամբ պահանջվել է ներկայացնել նաև Պայմանագրի 4.1.3 կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված ապահովման միջոցները:

Սակայն Երևանի քաղաքապետի հիշատակված գրությանը առ այսօր այդպես էլ որևէ պատասխան չի ներկայացվել, ինչպես նաև չեն ներկայացվել պայմանագրի հիշատակված կետով պարտադիր համարվող վարկային գծի պայմանագիրը կամ բանկային երաշխիքը, որը հիմք է տալիս եզրակացնելու, որ Ընկերության կողմից կոպտորեն խախտվում է նաև Պայմանագրի հիշատակված կետով սահմանված պահանջները:

4. Գնումների մասին օրենսդրության պահանջների հետ անհամատեղելիության մասով

Պայմանագրի կնքման պահին գործող ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետ Կարգ) 67-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, Պայմանագրի կնքման պահին գործող «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված «Ֆինանսական չափանիշը» գնահատվում է հետևյալ կարգով.

Հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետով հիշատակված փաստաթուղթը բնականաբար չի ներկայացվել և չէր էլ կարող ներկայացվել, քանզի Ընկերությունը ստեղծվել և պետական գրանցում էր ստացել 17.03.2015թ-ին, նախառրակավորման հայտի ներկայացումից ընդամենը երկու (2) օր առաջ:

Ընկերությունը ԵՔ-ԲԸՀԾՁԲ-15/3 ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային գործընթացի շրջանակներում համապատասխան հայտը ներկայացրել է Սանիտեկ (Sanitek s.a.r.l-ի հետ՝ համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) և նման դեպքում հայտը պետք է ներառեր համատեղ գործունեության պայմանագիր, համաձայն Օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և Կարգի 73-րդ կետի 4-րդ ենթակետի «դ» կետի պահանջների:

Առկա է Ընկերության և Սանիտեկ (Sanitek s.a.r.l-ի հետ 18.03.2015թ-ին կնքված Փոխըմբռման հուշագիր (այսուհետ Հուշագիր) անգլերեն լեզվով, որը իր բովանդակությամբ չի կարող համարվել համատեղ գործունեության պայմանագիր՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի Գլուխ 55-ի կանոնների համաձայն և դիտարկվել այդպիսին Օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի իմաստով հետևյալ հիմնավորումներով.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1026-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, Համատեղ գործունեության պայմանագրով երկու կամ ավելի անձինք (մասնակիցները) պարտավորվում են միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ՝ շահույթ ստանալու կամ օրենքին չհակասող այլ նպատակի հասնելու համար: Նույն Օրենսգրքի 1027-րդ հոդվածի 1-ին մասի, մասնակցի ավանդ է համարվում այն ամենը, *ինչ նա ներդնում է ընդհանուր գործում ներառյալ դրամը, այլ գույքը, մասնագիտական և այլ գիտելիքները, ունակություններն ու հմտությունները, ինչպես նաև գործարար համբավը և գործարար կապերը:*

Այս համատեքստում, անհրաժեշտ է պարզել թե արդյոք տվյալ բովանդակությամբ Հուշագիրը ՀՀ նյութական իրավունքի տեսանկյունից կարող է փոխարինել համատեղ գործունեության պայմանագրին կամ մեկնաբանվել որպես այդպիսին: Ավելին, առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հարցադրումը, թե որպես ավանդ այդ ինչ դրամ, այլ գույք, մասնագիտական և այլ գիտելիքներ, ունակություններ ու հմտություններ, և առավել ևս գործարար համբավ և գործարար կապեր կարող է ներդնել մի Ընկերություն, որը այդ Հուշագիրը ստորագրել է իր ստեղծումից և պետական գրանցում ստանալուց ընդամենը մեկ օր անց: Հուշագիրն այն հարցերին չի պատասխանում: Ավելին, Հուշագրում կարգավորումներ չկան առ այն, թե Ընկերությունը որպես Հուշագրի Առաջին կողմ կոնկրետ որքան դրամ, ինչ ծավալով այլ գույք, ինչպիսի մասնագիտական և այլ գիտելիքներ, ունակություններ ու հմտություններ, և առավել ևս գործարար համբավ և գործարար կապեր է ներդնում որպես ավանդ համատեղ գործունեություն ծավալելու համար: Հետևաբար, կարելի է վստահաբար պնդել, որ Հուշագիրը չի համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 55-րդ գլխի՝ համատեղ գործունեության պայմանագրի հիմնարար կանոններին:

Բացի այդ, Օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի վերջին պարբերության համաձայն, Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է Հրավերով:

ԵՔ-ԲՀՀԾՁԲ-15/3 ծածկագրով բանակցային ընթացակարգի հանձնաժողովի (կազմավորված Երևանի քաղաքապետի 19.02.2015թ. թիվ 139-Ա կարգադրությամբ) 2015թ. մարտի 9-ի թիվ 2 որոշմամբ հաստատվել է Երևան քաղաքի արևելյան հատվածում (Ավան, Արաբկիր, Էրեբունի, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններ) աղբահանության և սանիտարական մաքրման (ներառյալ ձմռան ամիսներին) երկարաժամկետ ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված արտակարգ կամ անկանխատեսելի այլ իրավիճակի առաջացման հիմքով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի Հրավերը: Ըստ այդ Հրավերի 7.4.2 կետի 2-րդ ենթակետի, Հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի նույն կետի 1-ին ենթակետով նախատեսված **պայմանագրով, այսինքն համատեղ գործունեության պայմանագրով ստանձնած պարտավորության չափով,** տվյալ հրավերով սահմանված որակավորման պահանջներին: Այդ կանոնը նույնությամբ տեղ է գտել նաև վերը նշված Հանձնաժողովի կողմից նույն օրով հաստատված «Նախաորակավորման հայտարարության» 6-րդ կետի «բ» ենթակետում:

Հուշագրի 2.3 կետի համաձայն, Առաջին Կողմը, այն է՝ Ընկերությունը պայմանագիրը հաղթելու դեպքում, կլինի պայմանագրի իրականացման հետ կապված բոլոր ֆինանսական, մարդկային ռեսուրսների և տեխնիկական կողմերի միակ պատասխանատուն: Սա նշանակում է, որ եթե նույնիսկ մի պահ Հուշագիրը պայմանականորեն դիտարկվի որպես համատեղ գործունեության պայմանագիր, ապա Առաջին կողմը դրանով ստանձնում է գնման պայմանագրով նախատեսված պարտավորություններն **ամբողջությամբ**: Դա հստակորեն բխում է Հուշագրի 2.7 կետից, ըստ որի ծրագրից գոյացած և քաղաքապետարանից ստացված ողջ հասույթները կփոխանցվեն Առաջին Կողմի մատնանշած բանկային հաշվին: Եվ եթե Հուշագրով Առաջին կողմը՝ Ընկերությունը ստանձնում է գնման պայմանագրով նախատեսված Կատարողի բոլոր իրավունքները և պարտավորությունները[8], ապա դրանից ուղղակիորեն բխում է, որ նրա հայտի գնահատման ժամանակ նրա որակավորումը ամբողջությամբ պետք է համապատասխաներ **համատեղ գործունեության պայմանագրով ստանձնած պարտավորության չափով, այսինքն 100%-ով,** տվյալ հրավերով սահմանված որակավորման պահանջներին՝ համաձայն Հրավերի 7.4.2 կետի 2-րդ ենթակետի և «Նախաորակավորման հայտարարության» 6-րդ կետի «բ» ենթակետի պահանջների: Եվ այս համատեքստում խնդրահարույց է, թե որքանով կարող է Հուշագրի ստորագրումից մեկ օր առաջ ստեղծված Ընկերությունը բերված հիմնավորումների և փաստական հանգամանքների ներքո համապատասխանել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված որակավորման չափանիշների մեծամասնությանը:

Առկա փաստական հանգամանքները մեկ ամբողջության մեջ դիտարկման և դրանց ձևավորման ժամանակագրական ընթացքի ուսումնասիրման արդյունքում առկա է անհերքելի փաստերի վրա հենվող հիմնավոր կասկած, որ ընդամենը մեկ օր առաջ գրանցված Ընկերության

[8] Ի դեպ հենց այդպես էլ հետագայում արվել է Պայմանագրի 7.10 կետով:

հետ Հուշագիր ստորագրելու միակ նպատակը եղել է Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները ինչ որ կերպ շրջանցելը:

Բացի այդ, համատեղ գործունեության հայտով Սանիտեկ (Sanitek s.a.r.l-ն որպես ոչ ռեզիդենտ չի ներկայացրել նաև Կարգի 67-րդ կետի 2-րդ ենթակետով պահանջվող հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին և նրա հետ 17.09.2013թ. կնքված ԵՔ-ԲԸԾՁԲ-13/71 պայմանագիրը, որի մեկնարկից պահից (01/12/2014թ.-ից) անցել էր ընդամենը 4 ոչ ամբողջական, ամիս, չէր կարող հիմք հանդիսանալ համարժեք գնահատելու վերջինիս ֆինանսական միջոցները: Առավել ևս, որ Երևանի քաղաքապետի համապատասխան Ծանուցմամբ արձանագրվել է, որ ԵՔ-ԲԸԾՁԲ-13/71 ծածկագրով բաց ընթացակարգի շրջանակներում Սանիտեկ (Sanitek s.a.r.l-ի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը ևս գնահատվել է կոպտագույն խախտումներով, մասնավորապես առանց վարկային գծի պայմանագրի կամ բանկային երաշխիքի պայմանագրի ներկայացման:

Հետևաբար, Կարգի 67-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար պարտադիր համարվող փաստաթղթերը ներկայացված չլինելու և Ընկերության նոր գրանցված լինելու, ինչպես նաև Օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին ենթակետի, Հրավերի 7.4.2 կետի 2-րդ ենթակետի և «Նախաորակավորման հայտարարության» 6-րդ կետի «բ» ենթակետի պահանջների չպահպանման պարագայում կոնսորցիումով հանդես եկող կողմերի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը պետք է գնահատվեր «անբավարար», համաձայն Օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի կանոնների, ըստ որի կոնսորցիումով ներկայացված հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները, և որը Ընկերության պարագայում, վերը բերված հիմնավորումների ներքո, զրոյական էր:

Վերոնշյալն ինքնըստինքյան ավտոմատ կերպով կբացառեր Ընկերությանը հաղթող ճանաչելը և նրա հետ Պայմանագիր կնքելը:

Գնման ընթացակարգի՝ մասնակցի որակավորման չափանիշ հանդիսացող «ֆինանսական միջոցներ» չափանիշի գնահատման փուլում տեղ գտած խախտումները իրենց հերթին առիթ են հանդիսացել ստուգելու նաև մասնակցի՝ «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի գնահատման գործընթացի իրավաչափությունը, Ընկերությանը հաղթող ճանաչելու և ըստ այդմ, պայմանագրի կնքման օրինականությունը պարզելու նպատակով:

Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված «մասնագիտական փորձառություն» չափանիշի գնահատման համար առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը՝ որպես Կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի (կամ պայմանագրերի) կողմերի հաստատած՝ պայմանագրի (կամ պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի (կամ պայմանագրերի) կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետով ամրագրված այս պահանջը տեղ է գտել նաև ԵՔ-ԲՀՀԾՁԲ-15/3 ծածկագրով բանակցային ընթացակարգի հանձնաժողովի (կազմավորված Երևանի քաղաքապետի 19.02.2015թ. թիվ 139-Ա կարգադրությամբ) 2015թ. մարտի 9-ի թիվ 2 որոշմամբ հաստատված Երևան քաղաքի արևելյան հատվածում (Ավան, Արաբկիր, Էրեբունի, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններ) աղբահանության և սանիտարական մաքրման (ներառյալ ձմռան ամիսներին) երկարաժամկետ ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված արտակարգ կամ անկանխատեսելի այլ իրավիճակի առաջացման հիմքով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի Հրավերում:

Ընկերությունը ԵՔ-ԲՀՀԾՁԲ-15/3 ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային գործընթացի շրջանակներում համապատասխան հայտը ներկայացրել է Սանիտեկ (Sanitek s.a.r.l-ի հետ՝ համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Այսինքն հայտը պետք է ներառեր համատեղ գործունեության պայմանագիր, համաձայն այդ գործընթացի պահին գործող Օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի և Կարգի 73-րդ կետի 4-րդ ենթակետի «դ» կետի պահանջների:

Հայտին կից ներկայացվել է Ընկերության և «Սանիտեկ» ՍՊԸ հայաստանյան մասնաճյուղի անունից միաժամանակյա, որպես տնօրեն հանդես եկող, Ն. Թավիլի կողմից առանց ամսաթվի ստորագրված և միայն Ընկերության կնիքով կնքված «Հայտարարություն մասնագիտական փորձառության մասին» փաստաթուղթը, որով հավաստվել է բանակցային ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում Լիբանանի Զահլի, Ջբեիլի, Բուհաիրա, Մինեհ, Լագոս, Նիգերիայում պատշաճ կերպով համանման աշխատանքների իրականացումը, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 16.000.000.000 դրամ:

Այս չափանիշի մասով ևս Հուշագիրը իր բովանդակությամբ չի կարող համարվել համատեղ գործունեության պայմանագիր՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի Գլուխ 55-ի կանոնների համաձայն և դիտարկվել այդպիսին Օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի իմաստով՝ այն նույն փաստական հանգամանքների առկայությամբ և իրավական հիմնավորումներով, որոնք մանրամասն նկարագրված են սույն Ծանուցման՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող մասում:

Այսինքն առկա փաստական հանգամանքները մեկ ամբողջության մեջ դիտարկման և դրանց ձևավորման ժամանակագրական ընթացքի ուսումնասիրման արդյունքում առկա է անհերքելի փաստերի վրա հենվող հիմնավոր կասկած, որ ընդամենը մեկ օր առաջ գրանցված Ընկերության հետ Հուշագիր ստորագրելու միակ նպատակը այս դեպքում ևս եղել է Կարգի 65-րդ կետի 3-ին ենթակետով սահմանված պահանջները ինչ որ կերպ շրջանցելը, որովհետև «Հայտարարություն մասնագիտական փորձառության մասին» փաստաթղթով նախկինում 16.000.000.000 դրամ գումարի չափով նմանատիպ ծառայությունների մատուցման հայտարարված փաստի իսկությունը չէր կարող հիմնավորվել միայն հիշյալ հայտարարությամբ: Առավել ևս, որ Երևանի քաղաքապետի համապատասխան Ծանուցմամբ արձանագրվել է, որ ԵՔ-ԲՀՀԾՁԲ-13/71 ծածկագրով բաց ընթացակարգի շրջանակներում Սանիտեկ (Sanitek s.a.r.l-ի «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը ևս գնահատվել է կոպտագույն խախտումներով:

Հետևաբար, Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետով «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի գնահատման համար պարտադիր համարվող փաստաթղթերը ներկայացված չլինելու և Ընկերության նոր գրանցված լինելու, ինչպես նաև Հրավերի 7.4.2 կետի 2-րդ ենթակետի և «Նախաորակավորման հայտարարության» 6-րդ կետի «բ» ենթակետի պահանջների չպահպանման պարագայում կոնսորցիումով հանդես եկող կողմերի «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը պետք է գնահատվեր «անբավարար», համաձայն Օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի կանոնների, ըստ որի կոնսորցիումով ներկայացված հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները, և որը Ընկերության պարագայում վերը բերված հիմնավորումների ներքո զրոյական էր:

Վերոնշյալն ինքնըստինքյան կբացառեր Ընկերությանը հաղթող ճանաչելը և նրա հետ Պայմանագիր կնքելը:

Սակայն Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետով և Հրավերով պարտադիր համարվող փաստաթղթերի չներկայացված լինելու պայմաններում այդ չափանիշը գնահատվել է «բավարար»:

Ամփոփելով վերը նշվածը՝ գնման ընթացակարգի մասնակցի որակավորման չափանիշներից երկուսը՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 4-րդ կետով նախատեսված «մասնագիտական փորձառություն» և «ֆինանսական միջոցներ» գնահատվել են «բավարար» Կարգի 67-րդ կետի և 65-րդ կետերի և Հրավերի պահանջների կոպիտ խախտմամբ, քանի որ այդ կարգի նշված կետերի համապատասխանաբար 3-րդ և 4-րդ ենթակետերի, ինչպես նաև Օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, մասնակցի որակավորումը կարող էր գնահատվել «բավարար» միայն նշված նորմերով, այդ թվում՝ Հրավերով նախատեսված պահանջները ապահովելու դեպքում:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 4-րդ կետով նախատեսված «մասնագիտական փորձառություն» և «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշների սխալ գնահատումը, որը ուղղակիորեն հանգեցրել է Ընկերությանը հաղթող ճանաչելուն (ընտրելուն), Պայմանագիրը միակողմանիորեն խզելու հիմք է, համաձայն Պայմանագրի 7.2 կետի. այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ <u>Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար:</u> Նույնպիսի իրավակարգավորում է նախատեսված նաև Կարգի 36-րդ կետի 8-րդ ենթակետում:

Ի հավելումն պայմանագրային պարտավորությունների նման ծավալով էական խախտումների, Ընկերությունը 29.08.2019թ-ից իսպառ դադարեցրել է Պայմանագրի գործողության ներքո գտնվող վարչական շրջաններում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը՝ դա պատճառաբանելով Երևանի քաղաքապետարանի կողմից կիրառվող տուգանքների հետևանքով առաջացած ֆինանսական միջոցների բացակայությամբ, այդ

մասին ՁԼՄ-ով տարածելով համապատասխան հաղորդագրություն և իր 02.09.2019թ.թիվ ՀՄ/029219 գրությամբ նույն բովանդակությամբ ծանուցում ուղարկելով Երևանի քաղաքապետարան: Մինչդեռ Պայմանագրի որևէ կետով նախատեսված չէ Կատարողի կողմից ծառայությունների մատուցումից հրաժարման իրավական հնարավորություն, Երևանի քաղաքապետարանի կողմից կիրառվող տուգանքների գումարները պայմանագրով վճարման ենթակա գումարներից հաշվանցելու (նվազեցնելու) դեպքում: Ընկերությունը իր դրամական հոսքերը և պարտավորությունների կատարումը պետք է կառավարի ինքնուրույն և ունենա բավարար այլընտրանքային դրամական ռեսուրսներ (օրինակ վարկային գծեր, բաժնետերերի կողմից տրամադրվող փոխառու միջոցներ), որպեսզի իր ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացող լրացուցիչ ֆինանսական բեռի, այդ թվում՝ իր կոնտրագենտների և (կամ) այլ պետական մարմինների կողմից պայմանագրով կամ օրենքով նախատեսված տուգանքների կիրառման պարագայում անգամ ի վիճակի լինի կատարել Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները:

Եվ Երևանի քաղաքապետարանը պայմանագրի կնքումից ի վեր, երբևէ և որևէ կերպ չի միջամտել Ընկերության դրամական հոսքերի (միջոցների) կառավարմանը և որևէ պայմանագրային պարտավորություն չի ստանձնել Ընկերության առջև՝ կիսելու նրա ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացող տարաբնույթ ռիսկերը: Գործող օրենսդրությամբ և Ընկերության հետ կնքված պայմանագրով քաղաքապետարանի ուղղակի պարտականությունն է Ընկերության նկատմամբ պատժամիջոցների կիրառել պայմանագրային պարտավորությունների չկատարման համար, և Երևան քաղաքապետարանի կիրառած յուրաքանչյուր տուգանք հիմնված է փաստարկված և արձանագրված դեպքերի վրա:

Ելնելով վերը նշվածից՝ 29.08.2019թ.-ից Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցումը թվով 7 վարչական շրջաններում իսպառ դադարեցնելու փաստը Պայմանագրի միակողմանի լուծման հիմք են համաձայն Պայմանագրի 2.1.3 կետի և Հիմնական պայմանների 35.1 կետի (c) կետի: Եվ թեկուզ միայն այս փաստի առկայությամբ պայմանագրի հիշատակված նորմերի հիմքով, Պայմանագիրը կարող էր խզվել սկսած 30.08.2019թ.-ից:

Ամփոփում

Հաշվի առնելով 2019թ. սկզբից թողարկված ձախողումներով արձանագրված աղբի՝ այդ թվում լրացուցիչ տրված ժամկետում չհավաքման փաստերը, Պայմանագրի գործողության ներքո գտնվող վարչական շրջաններում առկա աղբամանների փաստացի անբավարար քանակը, դրանց տեխնիկական բնութագիրը և վիճակը, Պայմանագրի ներքո շահագործվող աղբատար մեքենաների անբավարար քանակը, որոնք որպես աղբահանության գործընթացի իրականացման համար թե որպես առանձին բաղադրիչներ և թե որպես միմյանցով պայմանավորված մեկ ամբողջություն անհնար են դարձնում Պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան ծառայությունների մատուցումը, 29.08.2019թ.-ից ծառայությունների իսպառ դադարեցման փաստը, Պայմանագրի Հիմնական պայմանների 21.1 կետով պարտադիր համարվող ապահովագրության պայմանագրերի (վկայագրերի, պոլիսների) բացակայությունը, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 4-րդ կետով նախատեսված «մասնագիտական փորձառություն» և «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշների՝ Կարգի 67-րդ և 65-րդ կետերով և Հրավերով սահմանված պահանջների խախտմամբ սխալ գնահատումը, որը ուղղակիորեն հանգեցրել է Ընկերությանը

հաղթող ճանաչելուն (ընտրելուն) և նրա հետ պայմանագիր կնքելուն, մինչդեռ սույնով արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «ա» և «բ» ենթակետերը, 7.2 կետը, Պայմանագրի Հիմնական պայմանների 35.1 կետի (c) ենթակետը, (l) ենթակետը, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ ենթակետով, սույնով ամբողջությամբ միակողմանի կերպով լուծում եմ Պայմանագիրը և Պայմանագիրը համարում եմ լուծված սույն ծանուցումը ստանալու կամ այդ մասին պաշտոնական հայտարարության պահից:

Սույն ծանուցումը հրապարակվում է նաև www.gnumner.am կայքում:

Վերապահում

Սույն Ծանուցման մեջ հիշատակված փաստաթղթերի և իրավական ակտերի, այդ թվում՝ նորմատիվ ակտերի կոնկրետ դրույթների վրա կատարված հղումները չեն սահմանափակում Երևանի քաղաքապետարանին ապագայում նաև այլ դրույթներին հղումներ կատարելուց, ինչպես նաև չի նշանակում, որ Երևանի քաղաքապետարանն իրեն զրկում է հնարավոր իրավական գործընթացներում այլ խախտումներ և (կամ) փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ ներկայացնելու իրավունքից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ